ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՐԴԱԲԼՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N - 125
«29» դեկտեմբերի 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա. Նալբանդյանին

*Հարգելի պարոն մարզպետ.*

*Կից Ձեզ եմ ներկայացնում Վարդաբլուր համայնքի ավագանու* 27.12.2016*թ. թիվ* 45 *որոշումը:*

*Առդիր՝ 1 թերթ:*

*Համայնքի ղեկավար՝* Ո. Օհանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուր համայնք, գ. Վարդաբլուր,
093146149, vardablur.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» դեկտեմբերի 2016 թվականի N 45

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 2002 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԳԱԶ 3110-101 ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետով, հիմք ընդունելով «ԱԶ անկախ գնահատող Արմեն Ամիրբեկյան»-ի կողմից Վարդաբլուրի համայնքապետարանին սեփականության իրավունքով պատկանող Գազ 3110-101 մակնիշի մարդատար ավտոմեքենայի շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ տրված եզրակացությունը՝

Վարդաբլուր համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Վարդաբլուր համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականություն հանդիսացող, 2002թվականի արտադրության, Գազ 3110-101 մակնիշի ավտոմեքենան օտարել աճուրդ-վաճառքով:
2. Օտարման մեկնարկային գինը սահմանել 98 000 ՀՀ դրամ:
3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդ-վաճառքի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթերը աճուրդը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Մանուկյան Կամո Հայազատի | [signature] | | |
| Պապոյան Կարեն Վասիլի | [signature] | | |
| Սահակյան Ներսես Պարվականի | – | – | – |
| Վարդանյան Գեղամ Սուրենի | [signature] | | |
| Օհանյան Ստեփան Ռուբենի | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] [stamp] ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ